ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

Վերապատրաստվող ՝ Հեղինե Մանուչարյան

Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան հ.41 մանկապարտեզ

Վերապատրաստող ՝
Սեդա Գալստյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ 4

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6

1.1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

1.2 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ 10

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽԱՂԵՐԻ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԿԱՐԱԳՐԵՐ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ կես միլիարդ մարդ: Այս անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը:

2005թ.-ին Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց կրթության մասին» օրենքը, որը կազավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, կրթության կազմակերպման ընթացքում մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրթություն իրականացնող հաստատությունների նյութատեխնիկական և գիտամեթոդական բազայի ապահովումը:

Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով, այս փաստն է վկայում ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության3: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգ:

Ըստ օրենքի՝ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Ներառական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու լավագույն տարբերակներից մեկն է, ինչը հնարավորություն է տալիս ծանոթանալ բազմազան միջավայրին, զարգացնել միջանձնային փոխհարաբերություններ կառուցելու կարողություններն ու հաղորդակցման հմտությունները:

Նախադպրոցական կրթության պայմաններում ներառական կրթության հիմնական նպատակը բոլոր երեխաների հանդեպ հարգանքի ձևավորումն է՝ ճանաչելով և գնահատելով նրանց

բազմազանությունը: Երեխաները, կրթվելով բազմազանության միջավայրում, ունենում են տարաբնույթ ձեռքբերումներ, դրական լիցքեր են ստանում մեկը մյուսից, լրացնում են միմյանց՝ խճանկարի հավաքվող պատկերի սկզբունքով կերտելով շրջապատող աշխարհի վերաբերյալ նոր, ամբողջական պատկեր:

Նախադպրոցականի՝ ներառական միջավայրում զարգացումը և կրթությունը հնարավորություն են տալիս երեխաներին սովորել և զարգանալ մանկավարժների, ծնողների և ընտանիքի աջակցությամբ: Մանկավարժներն առաջնորդվում են ինչպես նախադպրոցական մանկավարժության մեթոդներով և սկզբունքներով, այնպես էլ՝ առանձին երեխաների հետաքրքրություններով, կարիքներով և կարողություններով:

Ներառական կրթության իրականացման կարևոր նախապայմաններից է համագործակցային աշխատանքների կազմակերպումը, քանի որ թիմում կարող են լինել անդամներ, ովքեր տարբերվող և զարգացման այս կամ այն առանձնահատկություն ունեցող երեխաների հետ աշխատելու փորձ չունեն, ուստի մասնագետների հետ փորձը կիսելը և համատեղ աշխատանքների պլանավորումը հնարավորություն կտան աշխատանքներն իրականացնել առավել արդյունավետ: Համագործակցային աշխատանքներում կարևոր դեր ունի ծնողը, հատկապես՝ նախադպրոցական տարիքում:

Կրթությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար կարևոր է, որ մանկավարժները թիմային համագործակցային աշխատանքի միջոցով (գործընկերներ, ծնողներ/խնամողներ, բժիշկներ, համայնքում գործող այլ կազմակերպությունների մասնագետներ) հայտնաբերեն այն խոչընդոտները, որոնց բախվում են երեխաները զարգացման և կրթություն ստանալու գործընթացում:

Ներառական նախադպրոցական կրթությունը պետք է ապահովի յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ: Սա նշանակում է, որ մանկավարժները պետք է գիտելիքներ ունենան այն մասին, թե ինչ կարող է և դեռ չի կարող անել յուրաքանչյուր երեխա՝ ելնելով ինչպես երեխաների զարգացման տարիքային օրինաչափություններից, այնպես էլ՝ կոնկրետ երեխայի զարգացման ընթացքից: Կարևոր է, որ մանկավարժներն իրենց աշխատանքները պլանավորելիս անպայմանորեն հավաքի առնեն այս գիտելիքները և տեղեկատվությունը:

Նախադպրոցական կրթության պայմաններում շատ կարևոր է երեխաներին դիտարկելը: Հետաքրքրությամբ և ուշադրությամբ երեխաներին դիտելը և լսելը թույլ է տալիս ավելին իմանալ նրանց մասին: Դիտարկումը հաճախ դիտվում է որպես նախադպրոցական տարիքի երեխաների գնահատման ամենապարզ, բայց ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Մանկավարժի համար երեխային դիտարկելը

սկսվում է այն բանից, թե ինչպես է յուրաքանչյուր երեխա վարվում, սովորում, արձագանքում նոր իրավիճակներին և փոխազդում ուրիշների հետ:

Այսպիսով՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները դիտարկում և բացահայտում են երեխաների կարողություններն ու հնարավորությունները նրանց կարիքները գնահատելու, զարգացումը խթանելու, և, որ ամենակարևորն է, կրթությանն աջակցելու համար:

ԳԼՈՒԽ 1.

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու համար:

Նախադպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է մանկավարժի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ պարապմունքների ընթացքում, խաղերի, միջոցառումների ժամանակ: Մանկավարժը՝ որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ, համագործակցելով նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և երեխայի ծնողների հետ, որոշակի ժամանակահատվածում դիտարկման մեթոդի միջոցով հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլնի մասին: Ինչպես արդեն նշել ենք, երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Եթե երեխայի նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի հանգում երեխայի մոտ գործունեության և մասնակցության որևէ խանգարման, բայց երեխան մեկ կամ մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է Կանխարգելիչ

միջամտությունների պլան ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և խաղասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

1.1 Կրթության առանձնահատուկ պայմանների ձևավորմանը նպաստող մանկավարժական մոտեցումներ

Խոսքը բարձրագույն հոգեկան գործընթաց է, որն ունի մի շարք գործառույթներ: Խոսքը մտածողության գործիք է և երեխայի ճանաչողության զարգացման միջոց: Խոսքն ունի նաև վարքի վերահսկման գործառույթ:

3 տարեկանների խոսքում հաճախ լինում են բառերի, վանկերի կամ առանձին հնչյունների ստիպողական կրկնումներ, ակամա դադարներ, որոշ բառերի «ձգված» արտաբերում, որոնք խանգարում են շրջապատողների հետ շփմանը: Այս դրսևորումներն անցողիկ են, սակայն որոշ դեպքերում կարող են ձգձգվել և սաստկանալ: Ուստի՝ այս ընթացքում երեխաներին պետք է հնարավորինս զերծ պահել սթրեսներից, արտահայտված հուզական իրավիճակներից, օգնել երեխային արտահայտել միտքը՝ երբեմն՝ զուգահեռ, երբեմն էլ՝ նրա փոխարեն ասելով:

Լսողությունն ուշ կորցրած երեխաների խոսքի զարգացման համար կարևոր է լիարժեք արտաբերման հղկումը, բերականության և ուղղագրության ուսուցումը:

Լսողության խանգարումների բարդ հետևանքների կանխարգելման միակ ուղին մանկավարժական վաղ աջակցության կազմակերպումն է: Մանկավարժական աջակցության կազմակերպման համար կարևոր է ճանաչել ծանրալսության դրսևորումները (ցուցիչները), ընդ որում՝ նույն երեխան կարող է ունենալ դրանցից մեկը կամ մի քանիսը:

Լսողության խանգարումներ ունեցող երեխայի և լսող հասակակիցների համագործակցության, խմբում ներառվելու, բարեհաջող ուսումնառություն կազմակերպելու համար խիստ կարևոր են մանկավարժական մոտեցումների և հաղորդակցման տարբեր ձևերի կիրառման մասնագիտական հմտությունները: Այսպես, առանձնահատուկ նշանակություն ունի մանկավարժի վերաբերմունքը, խոսքի հանդեպ պահանջների պահպանումը, միջավայրային հարմարեցումները:

1.2 Երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացի կառավարման առանձնահատկությունները

Վերջին շրջանում մտավոր հետամնաց երեխաների կրթության և դաստիարակության խնդիրներն էլ ավելի են կարևորվում, որովհետև անհրաժեշտություն և հիմնավոր պահանջ է դառնում նրանց ինտեգրումը հասարակությունը: Մանկավարժական կառավարումն իրականացվում է հենց սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացում, այդ թվում նաև՝ մտավոր հետամնաց երեխաների, որտեղ խրախուսվում են երեխաների ինքնուրույն գործունեությունը, ակտիվությունը, նախաձեռնությունը: Ուսումնասիրության նպատակն է մտավոր հետամնաց երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացի կառավարումը, որը բավականին բարդ խնդիր է ու մեծ ջանքեր է պահանջում և՛ ծնողներից, և՛ ուսուցիչներից:

Մտավոր հետամնաց երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացի կառավարումը պահանջում է արդյունավետ աշխատանք և նորովի մոտեցումներ, ուղիներ: Նախանշենք այդ ուղիները՝

1. Ուսումնասիրել այդ աշխատանքներում եղած առաջավոր փորձը, ընդհանրացնել և հարստացնել նոր կողմերով:

2. Համալիր մոտեցում ցուցաբերել գեղագիտական դաստիարակության գործընթացի նկատմամբ, որը ենթադրում է սկզբունքների, մեթոդների, հնարների միասնություն՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները:

3. Ստեղծել առողջ բարոյահոգեբանական, հանդուրժողական, փոխադարձ օգնության մթնոլորտ, որը կնպաստի մտավոր հետամնաց երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացմանը և կառավարմանը:

Այս փուլերը կարևոր են բոլորի համար՝ անկախ սոցիալական զարգացման մակարդակից և սերտորեն կապված են իրար: Մտավոր հետամնաց երեխաների գեղագիտական դաստիարակության համար կարևոր գործոն է երաժշտությունը՝ մանկական երգերը, ժողովրդական մեղեդիները, ինչպես նաև դասական երգահանների մանկական գործերի ունկնդրումը, վերարտադրումը:

Մտավոր հետամնաց երեխաների հետ աշխատելիս առաջին հերթին պետք է նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել բնության, գեղեցիկի նկատմամբ, նաև ցուցադրել բնության մասին նկարներ, ընթերցել գրական փոքրիկ հյուրեր բնության գեղեցկությունների՝ կանաչազարդ անտառի,

ֆչֆչան առվակի, դայլայլող թռչունների և փոքրիկ կենդանիների մասին, այնուհետև կազմակերպել այց-էքսկուրսիաներ մոտակա պուրակ, այգի անտառ: Մտավոր հետամնաց երեխաների գեղագիտական դաստիարակության գործում կարևոր է նաև նրանց գեղագիտական գործունեությունը և ինքնագործունեությունը (նկարել, երգել, պարել, ծեփել, ասմունքել, դերային խաղեր կազմակերպել, խաղալ) այսինքն՝ ստեղծագործական գեղարվեստական գործունեություն, որը տանում է նրանց ինտեգրմանը, միջավայրին ու ընկերներին հարմարվելուն, համատեղ գործունեություն ծավալելուն և համագործակցությանը: Տեղին է ակադեմիկոս Բ. Մ. Լիխաչովի այն միտքը, որ գեղարվեստական ինքնագործունեությունը սովորողի անձի հաստատման և ինքնահաստատման, կյանքի փորձի կուտակման և ընդունակությունների զարգացման միջոց է:

Գեղագիտական ստեղծագործական գործունեության ընթացքում ակտիվանում են մտավոր հետամնաց երեխաների զգայարանները, ձևավորվում են զգացմունքները, հետաքրքրություն են ցուցաբերում արվեստի տարբեր ճյուղերի նկատմամբ: Այդ երեխաներին կարելի է հանձնարարել նկարել հայկական ժողովրդական հեքիաթների հերոսներին, յուրովի նկարազարդել այդ հեքիաթները: Օգտակար են նաև գրական փոքրիկ երկերի՝ առակների բեմադրությունները, երգերի կատարումները և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Նախադպրոցական կրթությունն իրականացվում է վաղ մանկության ժամանակաշրջանում, երբ նախադրյալներ են ստեղծվում հետագա ամբողջ կյանքի և, մասնավորապես, դպրոցական կրթության բարեհաջող ընթացքի համար: Չնայած որ խաղը առաջատար գործունեություն է համարվում նախադպրոցական տարիքում, որպես արդյունավետ ուսուցման մեթոդ խորհուրդ է տրվում այն կիրառել երեխայի ուսումնառության ողջ ընթացքում:

Այս տարիքային փուլում երեխաները սովորում են կյանքի կարևոր դասեր և ձևավորում են բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են հանդուրժողականությունը, համբերությունը, համառությունը, կարեկցանքը, բարությունը և հարգանքը:

Խաղը ամենակարևոր միջոցներից մեկն է, որով երեխաներն ստանում են շրջապատող աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Այդ իսկ պատճառով, նախադպրոցական կրթության ծրագրերի հիմքում ընկած է խաղը՝ դրա համար անհրաժեշտ միջոցներով և պայմաններով:

Խաղի կարևոր առանձնահատկություններից մեկը երեխաների ազատ գործելու և ինքնուրույն փորձ ձեռք բերելու հնարավորությունն է, ինչի միջոցով զարգանում է նրանց նախաձեռնողականությունը, որոշումներ կայացնելու և ինքնուրույն ընտրություն կատարելու կարողությունները: Ակտիվ խաղը հնարավորություն է ստեղծում ցանկացած, այդ թվում՝ զարգացման այս կամ այն առանձնահատկություններ ունեցող երեխայի զարգացման, առողջության, հուզական բարեկեցության և սոցիալական փոխհարաբերությունների զարգացման համար:

Երեխայի խաղալու իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա ակտիվ և մասնակցային խաղալու հնարավորություն՝ անկախ զարգացման առանձնահատկություններից:

ԳԼՈՒԽ 2.

Նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան խաղերի և վարժությունների նկարագրեր

Քանի որ նախադպրոցական տարիքում երեխաների ուսուցան և զարգացման համար հիմնական միջոցը խաղային գործունեությունն է, մանկապարտեզներում բազմազանությունների ընդունման և դրական փոխհարաբերությունների կառուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ևս մեծ դեր ունեն խաղվարժությունները:

Մինչ խաղի ընթացքը՝ մանկավարժը պետք է համոզվի, որ երեխան հասկացել է խաղի հրահանգը: Սովորաբար չլսող երեխան պարզապես գլխով հաստատում է՝ ի պատասխան «հասկացա՞ր» հարցին: Այդ պատճառով մեծահասակը պետք է խոսելիս, խաղի ընթացքը բացատրելիս կանգնի այնպես, որ երեխան հստակ տեսնի նրա դեմքը, օգտագործի հարուստ դիմախաղ և կողմնորոշող ժեստեր:

Կռահի՛ր խաղալիքը

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. ձայնարձակող խաղալիքներ կամ մանկական նվագարաններ:

Ընթացք

Երեխայի հետ միասին լսել խաղալիքների ձայները, ապա տեղադրելով դրանք երեխայի համար անտեսանելի վայրում՝ հերթով հնչեցնել, որպեսզի նա կռահի, թե որ խաղալիքը կամ նվագարանն է հնչում:

Ցուցումներ

Սկզբում կարելի է առաջարկել 2 խաղալիք կամ նվագարան, այնուհետև՝ դրանց թիվն աստիճանաբար ավելացնել: Կարևոր մեթոդական նախապայման է նաև սկզբում իրարից խիստ տարբերվող ձայներ ունեցող խաղալիքներով խաղալը, ապա՝ նման հնչողությամբ խաղալիքներ կամ նվագարաններ առաջարկելը (Նկար 1): Որպես խաղի մեկ այլ տարբերակ՝ կարելի է ունենալ խաղալիքների կամ նվագարանների նկարներ. Կռահելուց հետո երեխան պետք է ցույց տա համապատասխան նկարը:

Նկար **1**. Լսողական ընկալման զարգացումը նվագարանների միջոցով

Այսպիսով հերառական կրթությունը ենթադրում է մանկավարժների և, առհասարակ, մեծահասակների կողմից առավելագույն աջակցություն, ծնողական համայնքի հետ համագործակցության

ավելի բարձր մակարդակ, արդյունավետ թիմային աշխատանք, որոնք միտված կլինեն երեխայի շահերի և կրթության իրավունքի պաշտպանությանը:

Անհնար է ունենալ կրթության բարձր որակ և լինել մրցունակ, եթե երկրի կրթության համակարգը չի ինտեգրվում միջազգային կրթական գործընթացներին և չի ապահովում միջազգային չափանիշներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ համակարգը զարգանա բարեփոխումների ճանապարհով, ինչն այսօր որդեգրել է Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը:

ՀՀ-ում «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվեց 2005թ. նոյեմբերի 15-ին: Վերջինս կանոնակարգեց ոլորտի գործունեությունը և ապահովեց նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության շարունակականության համար իրավական հիմքերը:

Հաշվի առնելով ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության ներդրման քաղաքականությունը՝ 2020թ. մայիսի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ««Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որի համաձայն արձանագրվեցին նախադպրոցական կրթության ոլորտի զարգացմանը և կանոնակարգմանը վերաբերող մի շարք հոդվածներ, օրինակ՝ 1, 3, 5, 7, 8, 9, համաձայն որոնց՝ սահմանվեցին ՀՀ նախադպրոցական կրթության բնագավառում բոլորի համար հավասար նախադպրոցական կրթության իրավունքի իրացումը, նախադպրոցական կրթության հասանելիության և մատչելիության հիմքերը: Նույն օրենքի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ-ում ներդնել նախադպրոցական համընդհանուր ներառական կրթություն: Այս գործընթացը նախատեսվում է իրականացնել 2021-2023թթ.՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը չի վերաբերում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը. այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և կենտրոնացած բոլորի կրթական կարիքների վրա՝ բոլոր սովորողների համար ապահովելով որակյալ կրթություն և սոցիալական ներառում:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կատարած հետազոտությունների՝ ներառական կրթությունն օգնում է բոլոր երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող և առանց, նաև նպաստում ավելի կայուն, հանդուրժող և բարգավաճ հասարակության կայացմանը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժները պետք է տիրապետեն այս տարիքի երեխաների հետ կիրառվող մանկավարժական մոտեցումներին, մեթոդներին ու հնարներին և կարողանան ճկուն կերպով ընտրել և կիրառել դրանք:

Ներառական կրթության արդյունավետ իրականացումը պահանջում է մեծ ջանքեր և նեդրումներ: Ներառական կրթության առաջնահերթ խնդիրներից է սովորողների կրթադաստիարակչական աշխատանքներում և մասնագիտական կրթության ձեռքբերման ընթացքում հնարավոր խոչընդոտների հաղթահարման ուղիների որոնումը:

Անհրաժեշտ է մինչ այժմ համակողմանի իրականացված ուսումնասիրությունների հիման վրա վեր հանել Հայաստանի Հանրապետությունում առկա խնդիրները՝ առաջարկելով իրատեսական լուծումներ՝ ավելի հստակեցնելով պետական կառույցների պատասխանատվությունը և, ամենակարևորը, գնահատելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տրված կրթության որակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ներառական կրթությունը գործնականում(ուսումնամեթոդական ձեռնարկ)Պետրոսյան Ս., Երևան, 2018
2. Ներառական կրթության հիմնախնդիրները, Հեղինակների խումբ, Գյումրի, «ԷԼԴՈՐԱԴՈ» հրատարակչություն, 2017
3. «Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ:» Մեթոդական ուղեցույց ձեռնարկ մանկավարժների համար: Հեղինակների խումբ, ՀՄԿ, Երևան 2021

4. Նախադպրոցական կրթության մասին օրենք
5. «Ինչպե՞ս խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում»-Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ), Երևան 2020
6. «Ինչպե՞ս կարգավորել երեխայի վարքը, չանտեսելով նրա առանձնահատկությունները» Մեթոդական ձեռնարկ ծնողների համար -Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020